Գ Ն Ա Հ Ա Տ Մ Ա Ն  Ե Վ  Թ Ե Ս Տ Ա Վ Ո Ր Մ Ա Ն  Կ Ե Ն Տ Ր Ո Ն

# 9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2011

# Ֆ Ի Զ Ի Կ Ա

## ԹԵՍՏ 2

ՔՆՆԱՍԵՆՅԱԿԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

*Սիրելի՛ աշակերտ*

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:
Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:
*Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:*

*Ցանկանում ենք հաջողություն*

1-24-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանի համարը վերցրե՛ք շրջանակի մեջ և դրե՛ք «*X*» նշանը պատասխանների ձևաթղթի համապատասխան վանդակում:

**1** Թվարկվածներից ի՞նչը կարելի է ընդունել որպես հաշվարկման մարմին.

1) ցանկացած մարմինը
2) Արեգակը
3) Երկիրը
4) դպրոցի շենքը

**2** Երկրի մակերևույթից ուղղաձիգ դեպի վեր նետված մարմինը գետնին ընկավ նետումից 3 վ անց: Որքա՞ն է մարմնի վերելքի ժամանակը (դիմադրության ուժերն անտեսե՛ք).

1) 1,5 վ
2) 9 վ
3) 6 վ
4) 3 վ

**3** Հետևյալ արագություններից ո՞րն է ամենամեծը.

1) 1000 սմ/վ
2) 10 մ/վ
3) 30 մ/վ
4) 90 կմ/ժ

**4** 1 լ տարողությամբ անոթը լցված է կերոսինով: Որքա՞ն է կերոսինի զանգվածը (կերոսինի խտությունն ընդունե՛ք 800 կգ/մ$^3$).

1) 800 կգ
2) 0,8 կգ
3) 8 կգ
4) 80 կգ

**5** Ի՞նչ $F_2$ ուժով պետք ազդել նկարում պատկերված լծակի վրա, որպեսզի այն հորիզոնական դիրքում գտնվի հավասարակշռության վիճակում.




1) 10 Ն
2) 2 Ն
3) 4 Ն
4) 8 Ն

**6** Մարզիկը թափավազք է կատարում և թռչում որոշակի բարձրության վրա տեղադրված հորիզոնական ձողի վրայով: Թվարկված պահերից որո՞ւմ է նրա վրա ազդում ծանրության ուժ.

1) թվարկված բոլոր պահերին
2) թափավազքի
3) թռիչքի սկզբնապահին
4) գետնին վայրէջք կատարելու



2011 թ. 9-րդ դասարանի ավարտական քննություն

*Պատասխանների ձևաթուղթ*
*Ֆիզիկա*

**Եղե՛ք ուշադիր** *Ընտրովի պատասխանով առաջադրանքները կատարելու համար ձեր ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դրեք X նշանը (միևնույն սյունակում մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ):

**Ընտրովի պատասխանով առաջադրանքներ**

Պատասխանի համարը

| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | 1 |
| 2 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | 2 |
| 3 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | 3 |
| 4 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | 4 |

Պատասխանի համարը

| | 21 | 22 | 23 | 24 |
|---|---|---|---|---|
| 1 | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 2 | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 3 | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| 4 | ☐ | ☐ | ☐ | ☐ |

Սխալ նշված պատասխանները փոխելու տեղը

Փոխված պատասխանների քանակը

**Կարճ պատասխանով առաջադրանքներ**

Առաջադրանքի համարը

| | | | | |
|---|---|---|---|---|
| 25 | | | 30 | |
| 26 | Ա | Բ | 31 | |
| | | | 32 | |
| 27 | | | 33 | |
| 28 | | | 34 | |
| 29 | | | 35 | |

Սխալ նշված պատասխանները փոխելու տեղը

**Լրացնում է ստուգողը**

**Ընդարձակ պատասխանով առաջադրանքների միավորները**

| | 36 | 37 | 38 | 39 | 40 |
|---|---|---|---|---|---|
| 1 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ |

Հանձնաժողովի անդամներ՝

1. ........................................

2. ........................................

Հանձնաժողովի նախագահ՝

........................................

| | |
|---|---|
| Միավորների գումարը | |
| Գնահատականը | |

**7** Նկարում պատկերված 2 կգ զանգվածով մարմնի վրա ազդում են $F_1$= 4 Ն և $F_2$=3 Ն ուժերը: Ո՞ր ուղղությամբ և ի՞նչ արագացմամբ կշարժվի մարմինը.




1) $F_2$ ուժի ուղղությամբ՝ 3,5 մ/վ$^2$ արագացմամբ
2) $F_1$ ուժի ուղղությամբ՝ 0,5 մ/վ$^2$ արագացմամբ
3) $F_1$ ուժի ուղղությամբ՝ 3,5 մ/վ$^2$ արագացմամբ
4) $F_2$ ուժի ուղղությամբ՝ 0,5 մ/վ$^2$ արագացմամբ

**8** Ո՞րն է սահմանման ճիշտ շարունակությունը:

Ամենափոքր ժամանակամիջոցը, որից հետո տատանումները կրկնվում են, կոչվում է տատանումների ...

1) հաճախություն:
2) լայնույթ:
3) ժամանակ:
4) պարբերություն:

**9** Ո՞ր բանաձևով է որոշվում k կոշտությամբ զսպանակին ամրացված m զանգվածով բեռի ներդաշնակ տատանումների պարբերությունը.

1) $2\pi\sqrt{\frac{k}{m}}$
2) $\sqrt{\frac{k}{m}}$
3) $2\pi\sqrt{\frac{m}{k}}$
4) $\frac{1}{2\pi}\sqrt{\frac{k}{m}}$

**10** Թվարկված մեծություններից ո՞րն է բնութագրում ձայնի ուժգնությունը.

1) տատանումների հաճախությունը
2) ալիքի երկարությունը
3) տատանումների լայնույթը
4) տարածման արագությունը

**11** Նկարում պատկերված միատեսակ ապակյա խողովակներում, որոնց հատակին ամրացված են ռետինե բարակ միանման թաղանթներ, ջուր է լցված: Ո՞ր խողովակի թաղանթը կճկվի ամենաշատը.




1) կճկվեն հավասար չափով
2) 1
3) 2
4) 3

**12** Ինչպե՞ս է փոփոխվում մթնոլորտային ճնշումը՝ Երկրի մակերևույթից բարձրանալուն զուգընթաց.

1) սկզբում մեծանում է, այնուհետև՝ փոքրանում
2) մեծանում է
3) փոքրանում է
4) չի փոխվում

**13** Ո՞ր երևույթն են անվանում հալում:

Նյութի անցումը.

1) պինդ վիճակից հեղուկի:
2) հեղուկից պինդ վիճակի:
3) հեղուկից գազային վիճակի:
4) պինդ վիճակից գազայինի:

**14** Ի՞նչ միավորով է չափվում տեսակարար ջերմունակությունը միավորների ՄՀ-ում.

1) 1 Ջ/(կգ·° C)
2) 1 Ջ
3) 1° C
4) 1 Ջ/կգ

**15** Ջերմամեկուսացված բաց անոթում գտնվող ջրի մի մասը գոլորշիացավ: Կփոփոխվի՞ արդյոք անոթում մնացած ջրի ջերմաստիճանը.

1) սկզբում կբարձրանա, հետո կիջնի
2) կիջնի
3) կբարձրանա
4) չի փոփոխվի

**16** Նկարում պատկերված էլեկտրական շղթայի տարրերի պայմանական նշաններից ո՞րն է համապատասխանում շիկացման լամպին.

1) 4
2) 1
3) 2
4) 3




**17** Որքա՞ն է նկարում պատկերված էլեկտրական շղթայի տեղամասի ընդհանուր դիմադրությունը, եթե $R_1 = R_2 = 2$ Օմ, $R_3 = 4$ Օմ.

1) 8 Օմ
2) 0,5 Օմ
3) 2 Օմ
4) 5 Օմ






**38** Որքա՞ն ճանապարհ կանցնի մարմինը շարժման սկզբից 2 վ-ի ընթացքում:

Պատ.՝ ......................

(39-40) Նկարում պատկերված է էլեկտրական շղթայի տեղամաս: Օգտվելով նշված տվյալներից.




**39** որոշե՛ք A ամպերաչափի (ամպերմետրի) ցուցմունքը:

Պատ.՝ ......................

**40** հաշվե՛ք $R_1$ դիմադրությամբ հաղորդչում 2 վ-ի ընթացքում անջատված ջերմաքանակը:

Պատ.՝ ......................

**34** Ի՞նչ անկյուն է կազմում հարթ հայելու մակերևույթին ընկած ճառագայթն անդրադարձած ճառագայթի հետ, եթե ընկնող ճառագայթը հայելու հարթության հետ կազմում է 23°-ի անկյուն:

Պատ.՝ ......................

**35** Առարկայի բարձրությունը 1,2 մ է: Որքա՞ն է առարկայի պատկերի բարձրությունը բարակ ոսպնյակում, եթե ոսպնյակի խոշորացումը հավասար է 0,5-ի:

Պատ.՝ ......................

36-40-րդ առաջադրանքների լուծման ընթացքը գրառե՛ք թեստում՝ առաջադրանքի մոտ հատկացված տեղում:

(36-38) Նկարում պատկերված է մարմնի արագության՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը:

**36** Որքա՞ն է մարմնի արագացումը 0-2 վ ժամանակահատվածում:




Պատ.՝ ......................

**37** Որքա՞ն է մարմնի արագացումը 2 վ-3 վ ժամանակահատվածում:

Պատ.՝ ......................



**18** Ի՞նչ անկյուն է կազմում հոսանքակիր հաղորդչի վրա ազդող Ամպերի ուժն այդ հաղորդչի հետ.

1) $90^0$
2) $0^0$
3) $30^0$
4) $60^0$

**19** Որտե՞ղ են հատվում բարակ հավաքող ոսպնյակի վրա գլխավոր օպտիկական առանցքին զուգահեռ ընկած ճառագայթները՝ ոսպնյակից դուրս գալուց հետո.

1) կրկնակի կիզակետից դուրս
2) կիզակետում
3) կրկնակի կիզակետում
4) օպտիկական կենտրոնում

**20** Ի՞նչ նշանի լիցք ունի ատոմի միջուկը.

1) կարող է ունենալ տարբեր նշանների լիցքեր
2) դրական
3) բացասական
4) էլեկտրաչեզոք է

**21** Թթվածնի ատոմի միջուկում կա 8 նեյտրոն, իսկ միջուկի շուրջը պտտվում են 8 էլեկտրոն: Քանի՞ մասնիկ է պարունակում թթվածնի այդ ատոմը.

1) 32
2) 8
3) 16
4) 24

**22** Ո՞րն է ճիշտ շարունակությունը:

Երկրային մեկ օրն այն ժամանակամիջոցն է, որի ընթացքում.

1) Երկիրը մեկ պտույտ է կատարում իր առանցքի շուրջը:
2) Լուսինը մեկ պտույտ է կատարում Երկրի շուրջը:
3) Երկիրը մեկ պտույտ է կատարում Արեգակի շուրջը:
4) Արեգակը մեկ պտույտ է կատարում Երկրի շուրջը:

**23** Երկու մոլորակի՝ Արեգակի շուրջ պտտման $T_1$ և $T_2$ պարբերությունների ու նրանց ուղեծրերի $a_1$ և $a_2$ մեծ կիսաառանցքների միջև ո՞ր առնչությունն է ճիշտ.

1) $\frac{T_1^2}{T_2^2} = \frac{a_2^3}{a_1^3}$
2) $\frac{T_1^3}{T_2^3} = \frac{a_1^2}{a_2^2}$
3) $\frac{T_1^2}{T_2^2} = \frac{a_1^3}{a_2^3}$
4) $\frac{T_1^3}{T_2^3} = \frac{a_2^2}{a_1^2}$

**24** Որքա՞ն է 1 պարսեկը.

1) $3{,}086 \cdot 10^{18}$ կմ
2) $3{,}086 \cdot 10^{8}$ կմ
3) $3{,}086 \cdot 10^{12}$ կմ
4) $3{,}086 \cdot 10^{13}$ կմ

25-35-րդ առաջադրանքների պատասխանները գրառե՛ք պատասխանների ձևաթղթի վրա հատկացված տեղում:

**25** Հավասարաչափ շարժվող գնացքի արագությունը 20 մ/վ է: Որքա՞ն ճանապարհ կանցնի այն 1 րոպեի ընթացքում:

Պատ.՝ ..............................

**26** Համապատասխանեցրե՛ք նկարում պատկերված ուժերը և դրանց բազուկները հենման կետի նկատմամբ:




Ա) $F_1$
Բ) $F_2$

ա) AB հատվածի երկարությունը
բ) OB հատվածի երկարությունը
գ) AO հատվածի երկարությունը

Պատ.՝

| Ա | Բ |
|---|---|
| | |

**27** 20 Ն ուժը մարմնին հաղորդում է 0,4 մ/վ$^2$ արագացում: Ի՞նչ ուժ է անհրաժեշտ այդ նույն մարմնին 0,15 մ/վ$^2$ արագացում հաղորդելու համար:

Պատ.՝ .............................

**28** Զսպանակին ամրացված գնդիկը մեկ լրիվ տատանման ընթացքում անցել է 0,16 մ ճանապարհ: Որքա՞ն է զսպանակի տատանումների լայնույթը:

Պատ.՝ .............................



**29** Որքա՞ն է ջրի մեջ կիսով չափ ընկղմված 1,5 մ$^3$ ծավալով փայտե գերանի վրա ազդող արքիմեդյան ուժը (ջրի խտությունն ընդունե՛ք 1000 կգ/մ$^3$):

Պատ.՝ ..........................

**30** 3 կգ զանգվածով պողպատե դետալը խառատային հաստոցի վրա մշակելու ընթացքում տաքացավ 50 °C -ով: Քանի՞ ջոուլով մեծացավ դետալի ներքին էներգիան (պողպատի տեսակարար ջերմունակությունն ընդունե՛ք 500 Ջ/կգ·°C, էներգիայի կորուստներն անտեսե՛ք):

Պատ.՝ ......................

**31** Հալման ջերմաստիճանի քանի՞ կիլոգրամ կապար է հալվել, եթե դրա համար պահանջվել է $7{,}5 \cdot 10^4$ Ջ ջերմաքանակ (կապարի հալման տեսակարար ջերմությունը ընդունե՛ք $0{,}25 \cdot 10^5$ Ջ/կգ):

Պատ.՝ ......................

**32** Որքա՞ն է հոսանքի ուժը լապտերում, եթե 4,5 Վ լարման մարտկոցին միացված լամպի թելիկի դիմադրությունը 15 Օմ է:

Պատ.՝ ......................

**33** Ի՞նչ աշխատանք է կատարում հոսանքը հաղորդչում 1 րոպեի ընթացքում, եթե հաղորդչի դիմադրությունը 6 Օմ է, իսկ հաղորդչում հոսանքի ուժը՝ 6 Ա:

Պատ.՝ ......................